Արման Եղիազարյան, Օքսանա Սոլոպովա

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX Դ. ՎԵՐՋԻՆ և XXI Դ. ՍԿԶԲԻՆ (ընդհանուր դիտարկումներ) [1]

Բանալի բառեր. մոսկվահայեր, սփյուռք, խմբեր, ինքնություն, հայրենադարձություն, հայրենիք, դպրոց, նոր ժամանածներ, հնաբնակներ, բնիկներ:

ՄՈՒՏՔ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ փլուզումից հետո ՌԴ հայությունը կանգնեց լուրջ մարտահրավերների առաջ: Առաջինն ինքնակազմակերպման խնդիրն էր, քանի որ միևնույն պետության (ԽՍՀՄ) տարածքում բնակվելու պայմաններում այդ խնդիրը գրեթե միշտ մղվում էր հետին պլան: Ապահովված էր կապը հայրենիքի հետ և, միևնույն ժամանակ, գոյություն ուներ ընդհանուր մեծ «հայրենիքը»՝ ԽՍՀՄ-ը:

Ռուսաստանի հայության կյանքում կարևոր տեղ ունի Մոսկվայի հայ համայնքը: Սկսած ուշ միջնադարից Մոսկվան հանդիսացել է հայության թե՛ հոգևոր և թե՛ մշակութային կարևոր կենտրոն: Մոսկվայի հայությունը մշտապես համարկված է եղել թե՛ Ռուսաստանի և թե՛ հայրենիքի կյանքում, կարևոր դեր է խաղացել հայ և ռուս ժողովուրդների շփումների ու մերձեցման գործում: Այստեղ են գործունեություն ծավալել մեծանուն շատ հայեր:

Հետխորհրդային շրջանում Մոսկվայի հայ համայնքի պարբերական ուսումնասիրությունն ունի հույժ կարևորություն մի կողմից զուտ գիտական և պատմաքաղաքական առումներով, իսկ մյուս կողմից մոսկվահայության առօրյա խնդիրների վերհանման և հարդյունս՝ դրանց լուծման նախաձեռնությունների մշակման տեսանկյունից:

Ուսումնասիրության առաջնահերթ խնդիրներից են համայնքի ինստիտուցիոնալ վիճակի բացահայտումը և տեղի հայության խմբերի շրջանում ազգային ինքնության հետ առնչվող իրողությունների լուսաբանումը:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ հայությունն ՌԴ-ում անհրաժեշտաբար սկսեց կարգավորել իր կազմակերպական կյանքը, հանդես եկան բազմաթիվ հայկական կազմակերպություններ: Մասնավորապես, Մոսկվայում ստեղծվեցին կազմակերպություններ, որոնց դերը մեծ էր ինչպես խնդրո առարկա քաղաքում, այնպես էլ ողջ ՌԴ հայության շրջանում:

1991 թ. ստեղծվել է «Մոսկվայի հայկական համայնք» կազմակերպությունը: 1998 թ. այն ուներ 1300 անդամ: Նպատակն էր քաղաքում ցրված հայության և հայկական կազմակերպությունների միավորումը[2]: 1993 թ. ստեղծվեց Մոսկվայի հայկական ասամբլեան: 1996 թ. «Ազգային-մշակութային ինքնավարության մասին» ՌԴ օրենքի ընդունումից հետո Մոսկվայում սկսեցին բացվել հայկական ազգային-մշակութային ինքնավարություններ: Մինչև 1998 թ. Մոսկվայում ստեղծվել է մեկ համաքաղաքային և ինը տեղական հայկական ազգային-մշակութային ինքնավարություն: Նրանց միավորման

---

[1] Սույն հոդվածում ներկայացված են Մոսկվայի հայ համայնքի արդի վիճակի ուսումնասիրության նպատակով իրականացված դաշտային հետազոտության (04.11.2018 թ.-10.11.2018 թ.) արդյունքները: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2018» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված «Մոսկվայի հայկական սփյուռքի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները XX դ. վերջին և XXI դ. սկզբին» գիտական ծրագրի շրջանակներում: Օ. Սոլոպովան նշված ծրագրի ուսումնասիրության մոսկովյան կողմի խմբի ղեկավարն է:

[2] Տե՛ս Долбакян Э., Москва – город судьбы армянской, «Дружба народов», № 1. М., 1998, http://magazines.russ.ru/druzhba/1998/1/dolb.html

փորձը 1998 թ. էական արդյունք չտվեց: 2000 թ. ստեղծվեց մի նոր կազմակերպություն՝ դարձյալ «Մոսկվայի հայկական համայնք»[1] անվանումով:

Այնուհետև կարգավորելով սեփական կազմակերպչական կյանքը՝ Մոսկվայի հայությունը 1999 թ. Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովից հետո հանդես եկավ համառուսաստանյան հայկական կազմակերպություն ստեղծելու նախաձեռնությամբ: Արդյունքում 2000 թ. կյանքի կոչվեց Ռուսաստանի հայերի միություն (Союз Армян России) համառուսաստանյան հասարակական կազմակերպությունը, որը շուտով մասնաճյուղեր բացեց ՌԴ մի քանի տասնյակ դաշնային սուբյեկտներում:

Մոսկվայի հայությունը 1990-ական թթ. սկզբին համալրվեց Հայաստանի Հանրապետությունից տեղի ունեցած արտագաղթի հետևանքով այնտեղ հաստատված տասնյակ հազարների հասնող հայության նոր խմբերով: Միևնույն ժամանակ, Մոսկվա եկան հայության այլ խմբեր ՌԴ տարբեր հատվածներից:

Ներկայումս Մոսկվայի հայությունն իրենից ներկայացնում է հայության բազմաբնույթ խմբերի և կազմակերպությունների մի ամբողջություն, որի մանրակրկիտ հետազոտությունը մեծ կարևորություն ունի Սփյուռքում հայապահպանության, Հայաստան-Սփյուռք կապերի զարգացման, հայության կազմակերպական նոր մեխանիզմների մշակման, ինչպես նաև այդ քաղաքի հայությանը հայկական կյանքում ինտեգրելու եղանակների ծրագրման առումով:

ՌԴ 1989 թ. մարդահամարի արդյունքներով քաղաքում բնակվում էր 43846, 2002 թ. մարդահամարով՝ 126057, իսկ 2010 թ. մարդահամարով՝ 106466 հայ[2]: Հետաքրքրական է, որ 2010 թ. հայության թիվը Մոսկվայում պակասել է համեմատած 2002 թ. հետ:

Սկսած 1990 թվականից՝ հայերը Մոսկվայում հաստատվել են մի շարք դրդապատճառներով՝ 1990 թ.՝ Ադրբեջանից բռնագաղթեցվածներ, 1991-1998 թթ.՝ մեծավ մասամբ ՀՀ-ից աշխատելու նպատակով տեղափոխվածներ (60 %), որոնց հետո ավելացան նաև նրանց ընտանիքները, իսկ այնուհետև՝ հիմնականում կենսապայմանների բարելավման, Մոսկվայում մշտական բնակության հաստատման և ուսման նպատակո[3]:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԷԹՆՈ-ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. 1987-1989 ԹԹ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1987-1989 թթ. Մոսկվայի հայության էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքներով Յու. Հարությունյանը հրատարակել է հատուկ հոդված: 1989 թ. Դրությամբ Մոսկվայի հայության թվաքանակը շուրջ 43,5 հզ էր: Հեղինակը ներկայացրել է ռուսահայերի համար Մոսկվայի, որպես նրանց ընկերային և ազգային-մշակութային կյանքի կենտրոն հանդիսանալը, մինչդեռ ՀԽՍՀ հայության համար այդ կյանքի կենտրոնը Երևանն էր: Մոսկվային նման, թեև ոչ համարժեք, դեր հայության տարբեր խմբերի համար խաղացել են Թբիլիսին ու Բաքուն, թեև վերջիններս հայության ավելի շատ համախումբ և ոչ թե ցրոնքային բնակության գոտիներ էին[4]: Վերջին գոտիների տարբերությունը հատկապես տեսանելի է մարդահամարի տվյալներում, երբ համախումբ բնակության գոտիներում հայության թիվը կրճատվում էր, իսկ ցրոնքային բնակության գոտիներում՝ ավելանում[5]:

---

[1] Տե՛ս «Истории армянских объединении», http://www.sarinfo.org/way/armunion.shtml

[2] Տե՛ս Долбакян Э., Армянская община Москвы: история, современное состояние, проблемы, «Общероссийская и национальная идентичность», материалы международной научно-практической конференции (19-20 апреля 2012 г.),- Пятигорск, 2012, с. 254-265. Տե՛ս նաև http://russia-armenia.info/node/4170

[3] Տե՛ս Арутюнян Ю., Об Армянской Диаспоре В России (Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара), Е. 2011, с. 39-41; Асрибекова Т., История формирования и этнокультурное развитие в конце XX-начале XXI в., автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Москва, 2012, http://www.dissers.ru/1istoriya/armyanskaya-diaspora-moskve-istoriya-formirovaniya-etnokulturnoe-razvitie-konce-xx-nachale-xxi-v-specialnost.php#footnote10

[4] Տե՛ս Арутюнян Ю., Армяне-москвичи. социальный портрет по материалам этносоциологического исследования, «Советская этнография», 1991, № 2, с. 4.

[5] Տե՛ս նույն տեղում, աղյուսակ 1:

Յու. Հարությունյանը մոսկվահայերին բաժանում էր երեք խմբի՝ նոր ժամանածներ (Մոսկվայում բնակվում են մինչև 10 տարուց պակաս), հնաբնակներ (Մոսկվայում բնակվում էին 10-19 տարի) և բնիկ մոսկվահայեր[1]:

Մոսկվահայերի քառորդ մասը քաղաքի բնիկներ էին, իսկ մյուսները՝ միգրանտներ (նոր ժամանածներ ու հնաբնակներ): Վերջիններիս 44 %-ը Հայաստանից էին, իսկ մնացյալներն այլ խորհրդային հանրապետություններից: Հայերը Մոսկվա էին գալիս երիտասարդ՝ մինչև 30 տարեկան հասակում, ուստի պատահական չէ, որ 25-29 տարեկան մոսկվահայերի շրջանում նոր հաստատվածները կազմում էին 76 %, մինչդեռ 40-49 տարեկանների շրջանում՝ միայն 10 %[2]: Նոր հաստատված երիտասարդների կեսը բարձրագույն կրթություն ուներ: Այդ առումով նրանց մեջ 18-19 տարեկանների շրջանում ուսանողների տոկոսն ավելի բարձր էր, քան բնիկ մոսկվացիները (57 %-ը 53 %-ի համեմատ)[3]: Մոսկվայում մինչև 9 տարի բնակվող հայերի շրջանում բարձրագույն կրթություն ունի նրանց կեսը, հնաբնակների 69 %-ը և բնիկ մոսկվահայերի 72 %-ը: Հետաքրքրական է, որ այդ առումով մոսկվահայերի ցուցանիշը գերազանցել է ռուսներին: Մոսկվայի տարեց հայերի 65 %-ն ուներ բարձրագույն կրթություն, մինչդեռ նույն տարիքային խմբի ռուսների միայն 46 %-ն ունի նման կրթություն[4]:

Հետաքրքրական է, որ այդ շրջանում Մոսկվայում նոր հաստատված հայերի շրջանում զբաղվածության հիմնական ոլորտներն էին արդյունաբերությունը, տրանսպորտն ու շինարարությունը, իսկ հնաբնակ հայերի ու բնիկ մոսկվացի հայերի համար՝ գիտական և ստեղծագործական ոլորտները: Մասնավորապես նոր ժամանածների 43 %-ը զբաղված էր արդյունաբերության, տրանսպորտի ու շինարարության բնագավառում, 18 %-ը՝ ծառայությունների մատուցման ու առևտրի, 13 %-ը՝ գիտական ու ստեղծագործական կազմակերպություններում, 10 %-ը ուսանողների էին, իսկ մնացածը զբաղված էր այլ որորտներում: Հնաբնակների 13 %-ը զբաղված էր արդյունաբերության, տրանսպորտի ու շինարարության բնագավառում, 10 %-ը՝ ծառայությունների մատուցման ու առևտրի, 38 %-ը՝ գիտական ու ստեղծագործական կազմակերպություններում, 25 %-ը ուսանողների էին, իսկ մնացածը զբաղված էր այլ որորտներում: Մոսկվայի բնիկ հայերի 15 %-ը զբաղված էր արդյունաբերության, տրանսպորտի ու շինարարության բնագավառում, 9 %-ը՝ ծառայությունների մատուցման ու առևտրի, 43 %-ը՝ գիտական ու ստեղծագործական կազմակերպություններում, 21 %-ը ուսանողների էին, իսկ մնացածը զբաղված էր այլ որորտներում[5]:

Կարևոր է նաև այդ տարիների մոսկվահայերի ընկերային խմբերի լուսաբանումը: Այդ առումով ևս ֆիզիկական և մտավոր աշխատանքով զբաղված մոսկվահայերի թիվը հակադարձ համեմատական էր: Աշխատավորներ էին նոր ժամանածների 45, հնաբնակների 15 և նիկ մոսկվահայերի 9 %-ը և մտավորականներ՝ նոր ժամանածների 28, հնաբնակ հայերի 52 և բնիկների 55 %-ը[6]:

Զափազանց խոսուն էր նաև մոսկվահայ խմբերի կողմից հայոց լեզվին տիրապետելու տոկոսային հարաբերակցությունը: Նոր ժամանած հայերի 54 %-ը մտածում էր հայերենով, 20 %-ը ազատ խոսում, 9 %-ը՝ խոսում դժվարությամբ, 5 %-ը՝ մեծ դժվարությամբ, իսկ 6 %-ը՝ չէր տիրապետում: Հնաբնակ հայերի շրջանում հայոց լեզվի տիրապետումը համապատասխանաբար կազմում էր 36, 27, 16, 7 և 14 %, իսկ բնիկ մոսկվահայերի շրջանում՝ 7, 10, 13, 7 և 64 %[7]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 6: Տե՛ս նաև Арутюнян Ю., Москвичи: этносоциологическое исследование, М., 2007, с. 161; նույնի «Об Армянской Диаспоре В России», էջ 19:
[2] Տե՛ս Арутюнян Ю., Армяне-москвичи, с. 4.
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 5:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 6:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 7:
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] Տե՛ս նույն տեղում, էջ 11:

Մոսկվահայերի հարցված հատվածը հետաքրքրական պատասխաններ է տվել նաև մայր ժողովրդին կապող (հարազատացնող) գծերի վերաբերյալ: Հարկ ենք համարում ստորև թարգմանաբար ներկայացնել Յու. Հարությունյանի կազմած աղյուսակը:

Կապը (հարազատության գծերը)	Նոր ժամանած հայեր	Հնաբնակ հայեր	Բնիկ հայեր
Մշակույթ, ավանդույթներ, սովորույթներ	65	53	38
Հայերեն լեզու	48	30	15
Պատմական ճակատագրեր	27	31	38
Բնավորություն, հոգեբանություն	19	14	16[1]

Նմանապես հույժ կարևորվում է մոսկվահայերի՝ հայ ժողովրդին ինքնանույնականացման տոկոսային ցուցանիշների ճշգրտումը (տե՛ս աղյուսակը):

Ինքնագիտակցության խտությունը (խորությունը)	Նոր ժամանած հայեր	Հնաբնակ հայեր	Բնիկ հայեր
Իր ժողովրդի հետ հարազատության զգացում	97	90	88
Իրավական (պետք է արդյոք նշել ազգությունը փաստաթղթերում)	66	57	39
էթնոմշակութային (մայրենին հայերենն է)	80	52	13
Աշխարհագրական (համարում են հայրենիք)	67	20	30
Հոգեբանական (սեփական ժողովրդի արժանիքների առավելությունը)	63	20	30[2]

Ամեն տարի Հայաստան էր այցելում նոր ժամանած հայերի 66, հնաբնակ հայերի 27 և բնիկ հայերի 11 %-ը, մի քանի տարին մեկ անգամ նույն խմբերի հայերի համապատասխանաբար 19, 44 և 31 %-ը, իսկ Հայաստան ընդհանրապես չեն գնում այդ խմբերի համապատասխանաբար 15, 29 և 58 %-ը[3]:

2000 Թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2000-ական թթ. դրությամբ Յու. Հարությունյանը մոսկվահայերին բաժանում էր նոր ժամանածների (մինչև 10 տարի), հին միգրանտների (10-19 տարի), հնաբնակների (20 և ավելի տարիներ) և բնիկների[4]:

2000 թ. դրությամբ Մոսկվայի հայերին կարելի էր ենթաբաժանել հիմնականում առավելապես ռուսալեզուների (նրանք, որոնք ոչ վաղ անցյալում ժամանել են Ռուսաստանից, Վրաստանից, Ադրբեջանից և ԽՍՀՄ այլ հանրապետություններից) և հայալեզուների (որոնք ժամանել են Հայաստանից): Առաջին խումբն աչքի էր ընկնում ավելի «որակական» հատկանիշներով. նրանց 3/4-ը բարձրագույն կրթություն ուներ (ռուսների շրջանում այդ ցուցանիշը 1/3 էր): 2000 թ. նախօրեին Մոսկվա ժամանածների մեջ այդ հարաբերակցությունը հօգուտ բարձրագույն կրթություն չունեցողների էր: Առաջին խմբի 41 %-ը զբաղված էր գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում, իսկ նոր

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 12:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 13:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 14:
[4] Տե՛ս Арутюнян Ю., Об Армянской Диаспоре В России, с. 62, 72; նույնի «Об этносоциологических исследованиях армян России», «Պատմաբանասիրական հանդես», 2010, թիվ 1, էջ 133;

ժամանած հայերը հիմնականում զբաղված էին առևտրի և ծառայությունների մատուցման ոլորտներում[1]:

2000 թ. դրությամբ հայալեզու խմբի մեջ զբաղվածությունը բաժանված էր հետևյալ կերպ. 52 %՝ աշխատավորներ և 37 %՝ մտավորականներ, իսկ ռուսալեզու հնաբնակների խմբում՝ համապատասխանաբար 14 և 77 %[2]: Զբաղվածության առումով նոր միգրանտների 34 %-ը զբաղված էին արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի ու կապի բնագավառներում, 47 %-ը՝ առևտրի և ծառայությունների մատուցման և միայն 19 %-ը՝ կրթության, մշակույթի և առողջապահության բնագավառներում: Հնաբնակների առումով նշված բնահգավառներում զբաղվածության տոկոսները համապատասխանաբար հետևյալներն էին. 29, 27 և 44 %[3]:

Բնիկ մոսկվացի հայերը բոլորը ռուսախոս էին: Նրանց միայն 38%-ն էր հավասարապես տիրապետում ռուսերենին ու հայերենին: Նրանց երեխաների 60 %-ն ընդհանրապես հայերեն չգիտեր, իսկ իմացողների միայն կեսն էր բավարար չափով տիրապետում: Հետաքրքիր է, որ 2000 թ. բնիկ մոսկվահայերի ներկայացուցիչների 80 %-ը թեև համարում էր, որ հայկական դպրոցներն անհրաժեշտ են, բայց նրանց մեծամասնությունը իր երեխաներին չէր կամենա այդ դպրոցներն ուղարկել: Ինչ վերաբերում է մոսկվահայության հին ու նոր խմբերի միջև շփումներին, ապա դրանք շատ քիչ էին. բնիկ մոսկվահայերի 53 %-ն ընկերություն էր անում ռուսների հետ: Ի դեպ, թե՛ հին, թե՛ նոր հայերի միայն 13-15 % -ն էր, որ հայկական կազմակերպությունների հետ շփումներ ուներ[4]:

Իրեն ամբողջապես հայ էր համարել հնաբնակ մոսկվահայերի (10-20 տարի Մոսկվայում բնակվող) միայն 1/3-ը: Ի դեպ, որքան հնաբնակ, այնքան ինքնանույնականացման հայկական բաժինը նվազում էր: 66 % հնաբնակներն իրենց համարում էին ռուսաստանցի: Հայաստանն իրենց հայրենիքն էր համարում մոսկվաբնակների 1/3-ը, իսկ բնիկ մոսկվահայերի շրջանում այդ տոկոսը կազմում էր 16: Մոսկվաբնակ ոչ բնիկ հայերի 34 %-ն իր հայրենիքը համարում էր Հայաստանը, 37 %-ը՝ Ռուսաստանը, մնացյալը՝ ԽՍՀՄ-ը, իսկ նոր միգրանտների մոտ այդ տոկոսը համապատասխանաբար 80, 4 և 14 էր[5]:

2000 թ. Մոսկվայի հայության հայալեզու հատվածի 52 %-ը աշխատավոր էր, 37 %-ը մտավորական, իսկ ռուսալեզու հատվածում համապատասխանաբար 14 և 77 %[6]: Այս շրջանում նոր ժամանած հայերի 34 %-ը զբաղված էր արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության ու կապի բնագավառներում, 47 %-ը՝ ծառայությունների մատուցման ու առևտրի, 19 %-ը՝ կրթության, գիտության, առողջապահության և մշակույթի: Հնաբնակ հայերի 29 %-ը զբաղված էր արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության ու կապի բնագավառներում, 27 %-ը՝ ծառայությունների մատուցման ու առևտրի, 44 %-ը՝ կրթության, գիտության, առողջապահության և մշակույթի[7]:

Կարևոր էր այդ ժամանակ մոսկվահայության շրջանում լեզուների տիրապետման առումով: Հնաբնակ հայերի և նոր ժամանածների շրջանում հարցումները տվել են ամբողջությամբ հակադարձ արդյունք. հնաբնակ հայերի 5 %-ն ազատ տիրապետում էր հայերենին, 63 %-ը ռուսերենին, իսկ երկու լեզուներին էլ տիրապետում էր հարցվածների 32 %-ը: Նոր ժամանած հայերի շրջանում այդ տոկոսները համապատասխանաբար կազմում էին 65, 5 և 30[8]: Հնաբնակ հայերի 29 %-ն իր մայրենի լեզուն էր համարում հայերենը և 56 %-ը ռուսերենը (16 %-ը դժվարանում էր պատասխանել), իսկ նոր ժամա-

---

[1] Տե՛ս Арутюнян Ю., Армяне в Москве (по результатам сравнительного исследования), «СоцИс», 2001, №11, с. 15.
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 16, աղյուսակ 2:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 16, աղյուսակ 3:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 17-18:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 19, աղյուսակ 4:
[6] Տե՛ս Арутюнян Ю., Об Армянской Диаспоре В России, с. 40.
[7] Տե՛ս նույն տեղում:
[8] Տե՛ս նույն տեղում, էջ 43:

նածների շրջանում նշված տոկոսները համապատասխանաբար կազմում էին 92, 3 և 5[1]:

Հայրենիքի ընկալումը մոսկվահայության շրջանում ուներ հետևյալ պատկերը.

Խումբը	Հայաստան	Ռուսաստան	ԽՍՀՄ
Բնիկ մոսկվահայեր	34	37	23
Նոր ժամանածներ	80	4	14[2]

Այդ ժամանակ մոսկվահայերի շրջանում կատարված հարցումն ի հայտ բերեց ինքնանույնականացման հետաքրքրական պատկեր, որի հիման վրա Յու. Հարությունյանը հակված էր համաձայնելու այն մտքի հետ, որ «ռուսաստանյան ինքնությունը կարող է իրականություն դառնալ»[3]:

	Ռուսաս-տանցի	Հայ	Եվրոպացի, աշխարհաքա-ղաքացի
Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվողներ	25	56	24
10-19 տարի Մոսկվայում բնակվողներ	38	33	26
20 և ավելի տարի Մոսկվայում բնակվողներ և բնիկներ	45	26	26[4]

2003 Թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ըստ 2003 թ. Մոսկվայի հայ դպրոցականների շրջանում անցկացված հարցման համաձայն՝ հետագայում մշտական բնակության վայրի ընտրության առումով հարցվածների մեջ հստակ կողմնորոշվածների 15 %-ը նշել է ՀՀ-ն, 59-ը՝ ՌԴ-ն, իսկ 26 %-ը մնացել է չկողմնորոշված: Իրենց ապագա երեխաներին էլ նրանց 64 %-ը կցանկանար տեսնել ՌԴ-ում, 27-ը՝ ՀՀ-ում, իսկ մնացյալը Եվրոպայում և ԱՄՆ-ում[5]:

Մոսկվահայերի շրջանում խառնամուսնությունների նկատմամբ առկա էր նաև բացահայտ դրական վերաբերմունք (դրական 75 %, բացասական՝ 21 %, չկողմնորոշված՝ 4 %): Հետաքրքիր է, որ դապրոցականներն իրենց ապագա կնոջ դերում կցանկանային տեսնել հայուհու բացարձակ մեծամասնության պարագայում (տղաները՝ 92 %, աղջիկները՝ 73 %. եթե տղաների պարագայում չկողմնորոշվածներ չկային, ապա աղջիկներ շրջանում չկողմնորոշվածների թիվը կազմում էր 17 %)[6]:

2004-2007 թթ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2004-2007 թթ. հետազոտությունների արդյունքներով՝ մոսկվահայերի 15 %-ը զբաղված էր ֆիզիկական աշխատանքով, իսկ 69%-ը՝ մտավոր աշխատանքով[7]:

2000-ականներին մոսկվահայերի՝ հայերենին տիրապետելը հետաքրքիր պատկեր էր ներկայացնում.

	18 տարե-կան և բարձր	մասնավորապես		
		նոր ժամանածներ	հնաբնակներ	բնիկներ

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 45:
[3] Տե՛ս Дробижева Л., Социальные проблемы межнациональных отношений в постсоветской России, М., 2003, с. 368.
[4] Տե՛ս Арутюнян Ю., Об Армянской Диаспоре В России, էջ 62:
[5] Степанян А., Социокультурные особенности армянской этнообщины Москвы (экскурс в прошлое и результаты полевого обследования 2003 г.), "Диаспоры", N 1, 2004, https://www.kavkaz-uzel.eu/articles/71483/
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] Տե՛ս Арутюнян Ю., Об Армянской Диаспоре В России, էջ 69: Տե՛ս նաև Арутюнян Ю., Армяне-россияне: опыт социально-культурной адаптации, «Общественные науки и современность», 2010, № 4, с. 97.

		(քաղաքում ապրում են մինչև 10 տարի)	(քաղաքում ապրում են 20 տարի և ավելի)	
ազատ տիրապետում են հայերենին	48	73	55	17
չեն տիրապետում	21	4	14	53[1]

Անհրաժեշտ ենք համարում նաև ներկայացնել Յու. Հարությունյանի կազմած՝ 2004-2007 թթ. մոսկվահայերի ինքնանույնականացումը ներկայացնող աղյուսակը (չափահաս բնակչության տոկոսով).

Ինքնության խտությունը (խորությունը)	Հասուն բնակչություն (18 տարեկան և ավելի)	Ընդ որում՝ խմբեր		
		Նոր ժամանածներ	Հնաբնակներ	Բնիկներ
Ինքնանույնականացում (որոշվում է «Ինչ-որ բան Ձեզ հարազատացնու՞մ է Ձեր ժողովրդի հետ» հարցին դրական պատասխանածների տոկոսով)	91	97	90	88
Ինքնագիտակցությունը որոշակի դրսևորմամբ. -կողմ են ազգությունը փաստաթղթերում նշելուն	58	66	57	39
-հայերենը համարում են մայրենի լեզու	49	80	52	13
-Հայաստանը համարում են հայրենիք	30	67	20	30
-Կիսում են իրենց ժողովրդի առավելությունների մասին պատկերացումները	30	63	25	
Ինքնության արդյունավետության չափումը (առաջնահերթությունը որոշվում է «Ձեզ առավել համարում եք հա՞յ, ռուսաստանցի՞, եվրոպացի՞...» հարցին տրված պատասխանով) Ի՞նչ եք նախընտրում. -ազգային պատկանելիությու՞նը,	28	40	31	26
-թե՞ ՌԴ քաղաքացիությունը	40	34	47	45[2]

Ի դեպ, Մոսկվայի հայության շրջանում հայոց լեզվին տիրապետելու մակարդակն էլ տարբեր է ըստ խմբերի: Քաղաքի բնիկ հայերի միայն 17%-ն էր ազատորեն տիրապե-

[1] Տե՛ս Арутюнян Ю., Об Армянской Диаспоре В России, էջ 72:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 74:

տում հայերենին (53 %-ն ընդհանրապես չէր տիրապետում), իսկ 10-20 տարի Մոսկվայում բնակվողների շուրջ 50%-ը: Կարևոր է այն, որ հայոց լեզվին տիրապետելու առումով և ընդհանրապես հարկ է առանձնացնել նաև երրորդ խումբը՝ ՌԴ այլ վայրերից և ԱՊՀ երկրներից Մոսկվա տեղափոխված հայերին, որոնց միայն 50 %-ն էր տիրապետում հայերենին և այն էլ միայն խոսակցականին[1]:

2010-2011 ԹԹ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2010-2011 թթ. հետազոտության արդյունքներով պարզվել է, որ մոսկվաբնակ հայերի շրջանում սեփական պատմության իմացությունը հիմնված էր մի քանի անկյունաքարային իրադարձությունների վրա. քրիստոնեության ընդունում, գրերի գյուտ, Հայոց ցեղասպանություն, Արցախյան շարժում (հարցվածների 80 %)[2]: 2011 թ. դրությամբ, եթե բնիկ մոսկվահայերի երիտասարդ հատվածն ընդհանուր դրական վերաբերմունք ուներ դեպի հայկական կազմակերպությունները (80 %), ապա ավելի բարձր տարիքային խմբերի մոտ նկատվում էր չեզոք և մերժողական վերաբերմունք (20 %)[3]: Առաջին խմբի կեսից ավելին մասնակցում էր այդ կազմակերպեությունների միջոցառումներին: Նույնն են ցուցանիշները նաև Մոսկվայում 10-20 տարի բնակվող հայերի շրջանում: Միակ տարբերությունը վերջիններիս կողմից հայկական կազմակերպությունների նկատմամբ վերաբերմունքն էր (60%): Մոսկվայում վերջերս հաստատված (մինչև 10 տարի առաջ) հայերից թեև 85%-ն էր դրական վերաբերում հայկական կազմակերպություններին, բայց նրանցից միայն 40%-ն էր պարբերաբար մասնակցում նրանց միջոցառումներին[4]: Սրա պատճառն այն է, որ Մոսկվայում նոր հաստատվածները հիմնականում ՀՀ-ից էին ժամանել, ուստի համայնքային միջոցառումներին մասնակցելու «կարիք» դեռ չէին զգում: Մոսկվայում 20 տարուց ավելի բնակվողների 70 %-ը չէր մասնակցում հասարակական կազմակերպությունների միջոցառումներին: Ընդհանրապես Մոսկվայի հայության ներկայացուցիչները, կախված Մոսկվայում բնակվելու ժամկետի երկարատևությունից, ավելի ու ավելի անտարբեր են համայնքային կյանքի նկատմամբ:

2011 թ. դրությամբ Մոսկվայում կար հայկական շուրջ 40 ազգային-մշակութային կազմակերպություն[5]:

2018 Թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սույն դաշտային հետազոտության մեջ հաշվի ենք առել այն, որ Յու. Հարությունյանի պարբերական հետազոտություններով բացահայտված Մոսկվայի հայության խմբերի ինքնության հիմնական բնութագրերն առանձնապես չեն փոփոխվել: Դրա պատճառով մյուս հետազոտողները (Ա. Ստեփանյան և Տ. Ասրիբեկովա) փորձել են լուսաբանել մոսկվահայերի կյանքի այլ՝ չուսումնասիրված ոլորտները ևս: Սակայն մենք փորձեցինք սկզբում հնարավորինս թարմացնել մոսկվահայ խմբերի բնութագրերը:

Մոսկվահայ խմբերի «թարմացում»-ն ու «հերթափոխ»-ը: Ի սկզբանե անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն խմբերը, որոնք 1990-ական թթ. առաջին կեսին համարվում էին «նոր ժամանածներ», արդի փուլում հանդես են գալիս արդեն «հնաբնակների» տեսքով և դրանից բխող՝ ինքնության բաղադրիչների փոփոխությամբ: Փոփոխություններ են կրել նաև Մոսկվայի բնիկ հայերը, որոնց շրջանում հայոց լեզվին տիրապետելն ու հայերնիքի հետ կապը էապես թուլացել են:

Ուստի հարկ է ընդգծել, որ մեր կողմից քննության առնված խմբերի ներկայացուցիչները «նոր ժամանածներ»-ի, «հնաբնակներ»-ի և «բնիկներ»-ի ենթաբաժանմամբ ամբողջությամբ արտահայտում են այն պատկերն ու կարգավիճակը, որն առկա է նաև 2018 թ., երբ 1990-ականների նոր միգրանտը, եթե մշտական բնակություն է հաստատել

---

[1] Տե՛ս Арутюнян Ю., Москвичи: этносоциологическое исследование, М., 2007, с. 161.
[2] Տե՛ս Асрибекова Т., նշվ. աշխ.:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում:

Մոսկվայում, այսօր՝ 20 տարի անց, դարձել է հնաբնակ, իսկ այն ժամանակների հնաբնակի սերունդն արդեն «ձգտում է» բնիկության «կարգավիճակի»:

Մյուս կողմից, համեմատած 1990-ական թթ. հետ, էականորեն պակասել է հայերի հոսքը Մոսկվա, ուստի քանակային առումով նրանք այսօր չունեն այն կշիռը, որ առկա էր 20 տարի առաջ:

Քաղաքի հայության թվաքանակը: Թեև ՌԴ վերջին՝ 2010 թ. մարդահամարի արդյունքներով Մոսկվայում բնակվում էր 106 հզ հայ, ներկայումս քաղաքի հայության ներկայացուցիչները որպես կանոն նշում են քաղաքում բնակվող շուրջ 500 հզ հայի մասին: Ի դեպ նույնիսկ 10 տարի առաջ էլ ըստ հարցվածների քաղաքում բնակվել է նույնքան հայ՝ մշտական ու ոչ մշտական հիմունքներով: Ակնհայտ է, որ թիվը խիստ պայմանական է, քանի որ հայության հաշվառում 2010 թ. այս կողմ տեղի չի ունեցել: Բայց համայանքային կյանքում ակտիվ անձանց շրջանում բավականին մեծ էր հենց վերջին 3-5 տարիներին Մոսկվայում հաստատված հայերի թիվը, որից կարելի է բխեցնել, որ Մոսկվայում բնակվող հայերի թիվն այսօր շատ ավելի մեծ է, քան 2010 թ. մարդահամարում արձանագրվածը: Ցավոք, անհնար է հստակորեն բացահայտել Մոսկվայի հայության խմբերի (նոր ժամանածներ, հնաբնակներ և բնիկներ) տեսակարար կշիռը հայության ընդհանուր թվաքանակում, սակայն քանի որ ՌԴ 2002 և 2010 թթ. մարդահամարներում արձանագրված հայության թիվը՝ 100 հազարից քիչ ավելի, կարելի է բխեցնել, որ վերոասացյալի տրամաբանությամբ Մոսկվայի հայության թեև հեղհեղուկ, բայց առավել մեծաքանակ խումբը նոր ժամանածներն են, որոնց մի զգալի մասը հետագայում կարող է լքել քաղաքը:

Քաղաքի հայկական կազմակերպությունները: Մոսկվայում ներկայումս գործող տարբեր բնագավառների մանր ու մեծ հայկական կազմակերպությունների թիվը հասնում է 50-ի: Դրանցից առավել խոշորներն են Հայ առաքելական եկեղեցու թեմական կառույցը՝ իր հովանու ներքո գործող ազգային հիմնարկներով, Ռուսաստանի հայերի միությունը, Մոսկվայի հայ երիտասարդության միությունը, «Արարատ» մշակութային միությունը և «Դեպի Արարատ» կազմակերպությունը:

Ի դեպ, պետք է շեշտել Մոսկվայի հայկական կազմակերպությունների նկատմամբ քաղաքի հայության փոքր ուշադրության մասին: Քննարկումից դուրս դնելով Հայ առաքելական եկեղեցին՝ կարող ենք փաստել, որ քաղաքի հայկական կազմակերպությունների անդամությունը (չշփոթել այդ կազմակերպությունների նախաձեռնությամբ տեղի ունեցող միջոցառումներին մասնակցողների քանակի հետ, որը մի քանի անգամ ավելի է) մեծ չէ: Առավել մեծաքանակ կազմակերպությունը՝ ՌՀՄ Մոսկվայի գլխամասային մասնաճյուղն ունի շուրջ 1000 անդամ:

Մոսկվահայերի կյանքում դերակատարություն ունի նաև «Դեպի Արարատ» մշակութային միությունը, որի կազմում ամենախոշոր միավորումը Հայկական երիտասարդական ֆեդերացիան է (200 հոգի): Նրա կազմում գործում են նաև «Մայիս» պատմական ընկերակցությունը (Հայոց պատմության ուսումնասիրություն և ուսուցանում), Հայ մարմնակրթական ընդհանուր միության մասնաճյուղը, հայ բժիշկների ասոցիացիա, քաղաքագետների ասոցիացիա, «Առաքել» պարի խումբը և սպորտային բաժինը: Այստեղ շաբաթը երկու անգամ անցկացվում է հայոց լեզվի ուսուցանում (նաև ռուսներին): Հայության շահերի պաշտպանությանն է նպատակաուղղված Ռուս-հայկական համագործակցություն կազմակերպությունը, կարևոր դերակատարում ունի Ռուսաստանի հայերի միավորում՝ ստեղծված 2017 թ.: Հարկ է նշել, որ վերջին շրջանում մոսկվահայ ուսանողների շրջանում տարածված են տարբեր հայրենակցական միություններ: Քաղաքում գործում են նաև հայկական մշակութային կազմակերպություններ՝ հայկական կամերային նվագախումբ, պարի ստուդիա, թատրոն, մանկական նվագախմբեր և այլն:

Ստորև ներկայացնում ենք քաղաքի հայության հիմնական հասարակական կազմակերպություններից մի քանիսի վերաբերյալ բովանդակային տվյալներ.

Կազմակերպությունը	Անդամությունը	Մասնակցությունը /տարիքային կազմը/	Խումբը /նոր ժամանած, հնաբնակ, բնիկ/
«Հայորդաց տուն»	2000	երիտասարդություն	բոլոր խմբերի ներկայացուցիչներ
Ռուսաստանի հայերի միություն	1000	տարբեր տարիքային խմբեր	բոլոր խմբերի ներկայացուցիչներ
«Դեպի Արարատ» մշակութային միություն	500	հիմնականում երիտասարդություն	հիմնականում նոր ժամանածներ ու հնաբնակներ /քիչ թվով բնիկներ/
Մոսկվայի հայ երիտասարդության ասոցիացիա	200	հիմնականում երիտասարդություն	հիմնականում հնաբնակներ ու բնիկներ
«Արարատ» մշակութային միություն	150	տարբեր տարիքային խմբեր	հիմնականում բնիկներ
Ռուսաստանի հայերի միավորում	200	երիտասարդություն (ուսանողություն)	բոլոր խմբերի ներկայացուցիչներ

Կազմակերպությունների անդամների քանակական կամ խմբային պատկանելիության տվյալները հնարավորություն են տալիս կատարելու նրանց գործունեության վերաբերյալ էական եզրահանգումներ: Բացի այդ, նրանցից յուրաքանչյուրը, բացի պարբերաբար իր առաքելությունից բխող միջոցառումների կազմակերպումից, իր պարտքն է համարում կազմակերպել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված ամենամյա միջոցառումներ:

Հայ առաքելական եկեղեցի: Հայ առաքելական եկեղեցին քաղաքի հայությանը համախմբող հիմնական կենտրոնն է: Քաղաքում կա երկու գործող հայկական եկեղեցի՝ Սբ Հարության ու Սբ Պայծառակերպության և մեկ հայկական մատուռ, որտեղ միայն ամիսը երկու անգամ է պատարագ մատուցվում: Եկեղեցու համակարգում գործում է Հոգևոր-լուսավորչական կենտրոն «Հայորդաց տուն»-ը, որն ունի 1400 սան: Այն իրենից ներկայացնում է բազմաճյուղ կրթական համալիր, որտեղ Հայոց պատմությունն ու Հայոց լեզուն պարտադիր առարկաներ են: Հիմնական նպատակն է հայապահպանությունը և մասնավորապես երեխաների ու երիտասարդների շրջանում հայ ազգային ինքնության պահպանումը, հայրենիքի և հայկական մշակույթի նկատմամբ սիրո սերմանումը: 2018-2019 ուստարում «Հայորդաց տան» առաջին դասարան հաճախողների թիվը 400 էր: Հայորդաց տանը կիրակնօրյա դպրոցից բացի գործում են թատրոն, «Տապան» թանգարանը, «Նուռ» երիտասարդական միությունը, հայագիտական կենտրոն, տարբեր մշակութային և ազգագրական խմբակներ: Կիրակնօրյա դպրոց հաճախող երեխաների ծնողները մոսկվահայ մտավորական Ա. Ավետիսյանի նախաձեռնությամբ պարբերաբար հավաքվում են ու քննարկում երեխաների ուսման ու դաստիարակության հիմնահարցերը: 2018 թ. նոյեմբերի 4-ին ներկա գտնվելով նման հանդիպման՝ ձեռք բերեցի անհրաժեշտ տեղեկություններ կիրակնօրյա դպրոցի, այնտեղ հաճախողների, նրանց ներհայկական խմբային պատկանելիության և այլ հարցերի վերաբերյալ, որի արդյունքները կներկայացնեմ ստորև՝ ըստ բաժինների: Իսկ արդ՝ կիրակնօրյա դպրոց հաճախողների խմբային պատկանելիության տոկոսային պատկերը.

Հայության խումբը	Կիրակնօրյա դպրոց հաճախելը
նոր ժամանածներ (քաղաքում ապրում են մինչև 10 տարի)	60
հնաբնակներ (քաղաքում ապրում են 10-20 տարի)	27

բնիկներ	13[1]

Գրեթե նույնն է պատկերը ողջ Հայորդաց տան առումով:

Հայկական դպրոցներ: Մոսկվայում ներկայումս գործում է հայոց լեզվի ուսուցմամբ թիվ 2042 դպրոցը, որն ընդհանրապես ուղղված է արևելյան լեզուների խորացված ուսուցմանը և ունի շուրջ 500 հայ աշակերտ: Այդ դպրոցի տնօրենը ներկայումս Գայանե Աբրահամյանն է: 2017 թ. իր գործունեությունը դադարեցրեց թիվ 1650 դպրոցը, որը հաճախ կոչում էին հայկական, քանի որ այնտեղ սովորող շուրջ 150 երեխաների մեծ մասը հայեր էին և դասավանդվում էր հայերեն:

Այսօր Մոսկվայում բացի «Հայորդաց տան» կիրակնօրյա դպրոցից գործում է նաև ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից «Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցը, որ գործում է 1988 թվականից և իր գործունեության ընթացքում տվել է շուրջ 3000 շրջանավարտ: Դպրոցի նպատակը եղել ու մնում է մոսկվահայ երեխաներին հայոց լեզվի, հայոց պատմության, հայ մշակույթի և ավանդույթների ուսուցումը: Ի դեպ, հետաքրքրական պատկեր է ներկայացնում քաղաքում գործող հայկական կազմակերպություններին հայության տարբեր խմբերի ներկայացվածության չափը (աղյուսակը ներկայացված է տոկոսային արտացոլմամբ).

Հայության խումբը	Մասնակցությունը	Խմբերի ընդհանուր հետաքրքրվածությունը հայկական կազմակերպությունների նկատմամբ
նոր ժամանածներ (քաղաքում ապրում են մինչև 10 տարի)	70	20-30
հնաբնակներ (քաղաքում ապրում են 10-20 տարի)	25	5-10
բնիկներ	5	5[2]

Ներկայացվածից ակնհայտ է, որ Մոսկվայի հայության խմբերն այնքան էլ հետաքրքրված չեն քաղաքի հայկական կազմակերպություններով: Դրա համար կան օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ՝ նոր ժամանածների աշխատանքային ծանրաբեռնվածությունը, կազմակերպությունների նկատմամբ վստահության պակասը և այլն:

«Նոև Կովչեգ» (Ноев Ковчег) ամսաթերթ: Մոսկվահայության կյանքում զգալի է «Նոև Կովչեգ» ամսաթերթի[3] դերը: Այն մեծագույն տեղ է հատկացնում Հայաստանի և հայրենիք-սփյուռք հարաբերությունների մասին տեղեկատվությանը՝ ուշադրության կենտրոնում պահելով նաև ռուսահայ սփյուռքն ընդհանրապես[4]: Դա մի կողմից արդյունք է Հայաստանին ավելի «մոտ» գտնվելուն, իսկ մյուս կողմից՝ Մոսկվայի հայության շրջանում առկա համապատասխան պահանջարկի:

Հայոց լեզվի տիրապետում: Ներկայումս մոսկվահայերի տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ շփումները հնարավորություն են տալիս ներկայացնելու հայոց լեզվի տիրապետման հետևյալ տոկոսային պատկերը.

Տիրապետման մակարդակը	Հայության խումբը		
	նոր ժամանածներ (քաղաքում ապրում են մինչև 10 տարի)	հնաբնակներ (քաղաքում ապրում են 10-20 տարի)	բնիկներ
Ազատ տիրապետում են	80	55	10

[1] Սույն պատկերը ներկայացվում է ըստ համայնքային գործիչների (աշխարհիկ և հոգևոր) հաղորդած տվյալների:

[2] Պատկերը ներկայացված է ըստ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հայտնած տվյալների:

[3] Տե՛ս պաշտոնական կայքը՝ http://noev-kovcheg.ru/

[4] Барсегян С., Взаимоотношения родина-диаспора в прессе Армянской диаспоры, «Բանբեր Հայագիտության», 2017, թիվ 1, էջ 187:

հայերենին			
Տիրապետում են մասամբ	15	35	30
Չեն տիրապետում	5	10	60

Նոր ժամանածների շրջանում հայերենին չեն տիրապետում հիմնականում Ռուսաստանի այլ վայրերից Մոսկվա տեղափոխված հայերը:

Հայրենիքի հետ կապը: Մոսկվահայ տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ հանդիպումներում հնարավոր եղավ թարմացնել նաև Հայաստանի հետ կապերի պատկերը (տոկոսային արտացոլումով).

Հայաստանում լինելու հաճախականությունը	Հայության խումբը		
	նոր ժամանածներ (քաղաքում ապրում են մինչև 10 տարի)	հնաբնակներ (քաղաքում ապրում են 10-20 տարի)	բնիկներ
Հայաստան են գնում ամեն տարի	60	35	5
Հայաստան են գնում մի քանի տարին մեկ անգամ	35	55	25
Հայաստան չեն գնում	5	10	70

Քաղաքացու և ազգային ինքնություն: Հայտնի է, որ բազմազգ միջավայրում բնակվողների շրջանում զուգորդվում, իսկ երբեմն նաև հակադրվում են ինքնության երկու տիրույթներ՝ ազգայինը և քաղաքացունը[1]: Մոսկվահայերի շրջանում երկու ինքնությունների արտացոլումը հնարավոր է բացահայտել հայրենիքի և ազգային պատկանելիության ընկալման ցուցանիշներով: Հայրենիքի ընկալումը մոսկվահայ խմբերի շրջանում ներկայումս տոկոսային արտացոլմամբ ունի հետևյալ պատկերը.

Հայության խումբը	Հայրենիքի ընկալումը	
	Հայաստան	Ռուսաստան
նոր ժամանածներ (քաղաքում ապրում են մինչև 10 տարի)	90	10
հնաբնակներ (քաղաքում ապրում են 10-20 տարի)	45	55
բնիկներ	10	90

Հետաքրքրական է նաև ազգային պատկանելիության ընկալումը մոսկվահայերի շրջանում (տոկոսային արտացոլմամբ), որն ի ցույց է դնում այն իրողությունը, որ մոսկվահայերի շրջանում մեծ է քաղաքացու ինքնությունը հիմնականը համարող (ռուսաստանցի նշումը կատարող) հայերի թիվը.

Հայության խումբը	Ազգության ընկալումը	
	հայ	ռուսաստանցի
նոր ժամանածներ (քաղաքում ապրում են մինչև 10 տարի)	85	15
հնաբնակներ (քաղաքում ապրում են 10-20 տարի)	40	60

[1] Տե՛ս Rogers Brubaker, Nationalism reframed: Nationhood and the national question in the New Europe, Cambridge, 2010, p. 18, 79-80 և այլն; Craig Calhoun, The Problem of Identity in Collective Action, in Joan Huber, ed., Macro-Micro Linkages in Sociology (Newbury Park, Calif.: Sage, 1991), p. 59 {քաղաքական (քաղաքացու) ինքնությունը ներկայանում է որպես «հավաքական (կոլեկտիվ) գործունեության փոփոխական արդյունք»}; Anthony Smith, National Identity (London: Penguin, 1991), p. 176; Бунаков М., Лукин В., Национализм и национальная идентичность в условиях глобализации: проблемы концептуализации, “Credo New”, 2006. № 1, http://credonew.ru/content/view/553/58

բնիկներ	5	95

Այստեղ պետք է հավելել, որ բնիկ մոսկվահայերի շրջանում բացի հայրենիքի ընկալումից, որ նրանց բացարձակ մեծամասնությունը համարում է Ռուսաստանը, ընդունված է նաև այսպես կոչված «պատմական հայրենիք»-ի ընկալումը: Նրանց շուրջ 40 տոկոսը Հայաստանը համարում է պատմական հայրենիք:

Հայրենադարձության հավանականությունը: Մոսկվայի հայության ներկայացուցիչների հետ հանդիպումներին անընդհատ բարձրացվում էր հայրենադարձության ծրագրերի առկայության հարցը: Առավել հետաքրքրված էին նոր ժամանածները, ինչը հասկանալի է այն պատճառով, որ նրանց բացարձակ մեծամասնությունը Մոսկվա է մեկնել Հայաստանից և դեռ չի կտրել կապը հայրենիքի հետ: Սակայն հայրենադարձության հավանականության մասին արտահայտվում էին նաև ոչ միայն հնաբնակ, այլ բնիկ մոսկվահայերը:Հայրենադարձության հավանականությունը մոսկվահայերի խմբերի շրջանում ներկայացված է ստորև բերված աղյուսակում (տոկոսային արտացոլմամբ).

Հայության խումբը	Հայրենադարձության հավանականությունը
նոր ժամանածներ (քաղաքում ապրում են մինչև 10 տարի)	65
հնաբնակներ (քաղաքում ապրում են 10-20 տարի)	20
բնիկներ	5[1]

Ամփոփելով հետազոտության նախնական արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ Մոսկվայի հայության վերջին 30 տարիների պարբերական հետազոտությունն ի հայտ է բերում կարևոր իրողություններ, որոնք կարող են օգտակար լինել մի կողմից համայնքային կյանքի կազմակերպիչների, իսկ մյուս կողմից սփյուռքի նկատմամբ քաղաքականություն իրականացնող հայրենական ինստիտուտների համար՝ նպաստելով արդյունավետ որոշումների կայացման գործընթացին:

Арман Егиазарян, Оксана Солопова, Особенности формирования и развития армянской диаспоры Москвы в конце XX и в начале XXI веков. После распада Советского Союза армяне Российской Федерации столкнулись с серьезными проблемами. Первой из них была проблема самоорганизации, поскольку она всегда отталкивалась при обстоятельствах проживания на территории того же государства (СССР). Связь с родиной была обеспечена, и в то же время существовала общая «родина» - СССР. С досоветской эпохи Москва была духовным и культурным центром армян России. Армяне Москвы всегда были интегрированы в жизнь России и родины и сыграли важную роль в контактах и сближении армянского и русского народов. Здесь многие великие армяне проводили мероприятия.

Целю исследования является уточнение нынешнего состава армян Москвы по происхождению и группам, изучение армянских организаций и структур города (духовные, общественно-политические, культурные, образовательные, молодежные, информационные и т. д.), а также их деятельности и некоторых аспектов идентичности московских армян.

Ключевые слова: московские армяне, диаспора, группы, идентичность, репатриация, родина, школа, новоприбывшие, старожилы, уроженцы.

Arman Yeghiazaryan, Oxana Solopova, Features of the formation and development of the Armenian diaspora in Moscow in the late XX-early XXI century. After the collapse of the

[1] Հարցվածների մեջ կային հայրենադարձվելու հավանականությունն ընդունող հայեր, որոնք պաշտոններ են զբաղեցրել ՌԴ դատական համակարգում:

Soviet Union, the Armenians of Russian Federation faced serious challenges. First of them was the problem of self-organization, as it was always pushed away under the circumstances of living in the territory of the same state (USSR). The connection with the homeland was secured, and, at the same time, a common “homeland” existed – the USSR.

Since the pre-Soviet era, Moscow has been a spiritual and cultural center of the Armenians of Russia. The Armenians of Moscow have always been integrated in the life of Russia and homeland, and played an important role in the contacts and approchement of the Armenian and Russian peoples. Here, many great Armenians carried out activities.

The research aims at clarifying the current composition of the Armenians of Moscow (by origin) and groups, studying the Armenian organizations and structures of that city (spiritual, social-political, cultural, educational, youth, informational and etc.), as well as their activity and some identity aspects of Moscow Armenians.

Key Words: Moscow Armenians, diaspora, groups, identity, repatriation, homeland, school, newcomers, old-timers, natives.